

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**  
**FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA**

**ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ**  
**YOU HAVE A RIGHT TO KNOW**

տ Ե Ղ Ե Կ ա գ ի ր / b u l l e t i n N 2 4

մ ա ր տ / M a r c h 2 0 0 9

Չրապարակվում է 2001 թվականից/ Published since 2001

[www.foi.am](http://www.foi.am)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/CONTENT

## Նորություններ եւ իրադարձություններ

ԻԱԿ-ի այցը Տավուշի մարզ .....	5
Եւս մի մարզ ծանոթացավ ՏԱ օրենքին .....	6
Դատախազության աշխատակիցների համար ՏԱ օրենքի իմացությունը պարտադիր է .....	6
Դատախազությունը կարելորում է տեղեկատվության ազատությունը... ..	7
ՏԱ դասընթաց ուսանողների համար.....	8
Օրենքը «մուտք գործեց» նաեւ քոլեջներ .. ..	8

## ՏԱ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Նոր Նորքի թաղապետի եւ թաղապետարանի .....	9
Ա. Չեյնալյանն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության.....	11
Ա. Չեյնալյանն ընդդեմ ՀՀ արտաքին գործերի նախարարության.....	11
Ա. Չեյնալյանն ընդդեմ ՀՀ Ոստիկանության.....	12

## ՏԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Ժողովրդավարի շղարշով թաղապետեր .....	13
Մարզպետարանները սկսել են բաց եւ իրապարակային աշխատել.....	15

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության նոր համակարգ մարզերում .....	16
Տարածքային կառավարում Էլեկտրոնային միջավայրում... ..	18
ՀՀ դատական համակարգի պաշտոնական կայքը.....	20
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն... ..	22
Հրապարակայնությունը վտանգվա՞ծ է խորհրդարանում.....	23

## ENGLISH ADDITION

The Prosecutor’s Office Finds Freedom of Information Important .....	24
The Claim of FOI vs Nor Nork Community Leader and Community Administration.....	25
A. Zeynalyan vs The RA National Security Service .....	26
Marzpetarans started working openly and publicly.....	27
The Decisions are “Declassified” .....	28
A New Electronic Document Sharing System.. ..	30
Is Publicity Endangered at the RA Parliament?.. ..	32



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԻԱԿ-ի այցը Տավուշի մարզ

Փետրվարի 27-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում էր: Նպատակը՝ նշյալ մարզի համայնքապետերի հետ անցկացնել «Ինչպես կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը» թեմայով ուսուցում: Զննարկմանը ներկա էին 26 համայնքապետեր եւ համայնքային ծառայողներ:

ԻԱԿ եւ ԱԺ փորձագետ Սարինե Հակոբյանը նախ ներկայացրեց ՏԱ օրենքը, տեղեկատվության դասակարգման, մշակման, պահպանման կարգը, պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, տեղեկատվություն ստանալու հարցում գրելու եւ մերժելու կարգերը:

Համայնքապետերը հիմնականում դրական են վերաբերում ՏԱ օրենքին, պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակմանը, միայն ՏԱ օրենքի մի կետն է, որ որոշ դժգոհությունների տեղիք է տալիս. համաձայն Օրենքի «տեղեկություն ստանալու հարցում ուղարկողը պարտավոր չէ հիմնավորել, թե ինչու է փնտրում տվյալ տեղեկատվությունը»: «Եթե տվյալ տեղեկատվությունը փակ չէ, նրանում չկան գաղտնիք պարունակող տվյալներ, ապա այն բոլորինն է՝ առանց բացառությունների եւ նախապայմանների», - պարզաբանեց փորձագետը: Մ. Հակոբյանը նաեւ ընդգծեց, որ «համայնքը սկզբունքորեն որեւէ փակ տեղեկատվություն չպետք է ունենա»: Եվ հրապարակման ենթակա են ոչ միայն ընդունված որոշումները, այլ նաեւ՝ դրանց նախագծերը: Հանդիպմանը ներկա համայնքապետերից միայն մեկը հպարտությամբ նշեց, որ իր համայնքում այդպես էլ արվում է:

Հաջորդ հանդիպումը մարզի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ էր, որին մասնակցում էին 28 երիտասարդ: Հանդիպման հիմնական առանցքը երիտասարդության ակ-



տիվության խթանումն էր: «Տեղեկացված քաղաքացին ավելի ուժեղ եւ պաշտպանված է», - ներկաներին խրախուսեց Մ. Հակոբյանը:

Երիտասարդներն անվստահ տեղեկացրին, որ պաշտոնյաներին դիմելիս հազվադեպ են պատասխան ստանում: ԻԱԿ ներկայացուցիչ Անահիտ Քոչարյանն էլ խորհուրդ տվեց տեղեկատվություն ստանալու հարցումները ձեւակերպելիս օգտվել ԻԱԿ-ի կողմից մշակած տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձեւից:

Միջոցառումներն իրականացվում են ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում:

## Եւս մի մարզ ծանոթացավ ՏԱ օրենքին

«Տեղեկատվության ազատությունը հրապարակայնությունն է, թափանցիկությունը եւ մատչելիությունը»,- այս 3 առանցքային հարցերի շուրջ էլ ծավալվեց «Ինչպես կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքը» թեմայով ուսուցումը, որը փետրվարի 17-ին Կոտայքի մարզում կազմակերպել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնը՝ մարզի քաղաքացիական հասարակության 27 ներկայացուցչի համար:

ԻԱԿ ծրագրերի համակարգող Անահիտ Քոչարյանը ներկաներին տեղեկացրեց Կենտրոնի գործունեության, ՏԱ խախտված իրավունքի դատական պաշտպանության մասին: ԻԱԿ եւ ԱԺ փորձագետ Մարինե Զակոբյանն էլ մանրամասնեց ՏԱ օրենքը. տեղեկատվության դասակարգման, մշակման, պահպանման կարգը, պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը, տեղեկություն ստանալու հարցման մերժումների կարգը եւ այլն:

Մասնակիցներին հետաքրքրում էր տեղեկատվություն ստանալու համար սահմանված վճարի կարգը: Մ. Զակոբյանը տեղեկացրեց, որ ՏԱ օրենքի համաձայն՝ մինչեւ 10 էջը տրամադրվում է անվճար, իսկ 10 էջից սկսած կարող է որոշակի գումար սահմանվել, սակայն «տեղեկատվության տնօրինումը չպետք է եկամտի աղբյուր դառնա: Տեղե-

կատվության տրամադրման համար ավագանու որոշմամբ որոշակի գումար է սահմանվում, որի արժեքը, սակայն, չպետք է գերազանցի տեղեկատվության տրամադրման իրական արժեքը»:

«Տեղեկատվություն ստանալու հարցում ուղարկողը որքանով որ չպետք է հիմնավորի իր հարցման նպատակը, այնքանով տեղեկատվություն տնօրինողը պետք է հիմնավորի իր մերժումը»,-ուսուցման մասնակիցներին պարզաբանեց ԻԱԿ փորձագետը: Քննարկման մասնակիցները զարմացան, երբ իմացան, թե որքան շատ հարցերում պետք է համայնքի բնակիչների առջեւ հաշվետու լինեն համայնքի ղեկավարն ու ավագանին: Նաեւ խոստացան, որ ՏԱ օրենքի վերաբերյալ իրենց գիտելիքները կկիրառեն եւ կփորձեն իրենց համայնքների աշխատանքը առավել թափանցիկ դարձնել:

## Դատախազության աշխատակիցների համար ՏԱ օրենքի իմացությունը պարտադիր է

Չետայսու ԶԶ դատախազության աշխատակազմի տարածքային բաժնի պետերը պետք է պարտադիր իմանան ՏԱ օրենքը՝ իրենց պաշտոնին համապատասխանելու համար:

Ինչպես տեղեկանում ենք ԶԶ գլխավոր դատախազության պաշտոնական վեբ կայքից ([www.genproc.am](http://www.genproc.am)), ԶԶ դատախազության աշխատակազմում տարածքային բաժնի պետի պաշտոնի զբաղեցման համար՝ տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված, մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջներում ավելացել է «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի պարտադիր իմացությունը:



# Դատախազությունը կարելորում է տեղեկատվության ազատությունը

Մարտի 14-15-ին Ծաղկաձորում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ գլխավոր դատախազության հետ համատեղ կազմակերպել էր ՁԼՄ-ների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում՝ «Դատախազության գործունեության լիազորությունները դատաիրավական բարեփոխումների արդի փուլում եւ տեղեկատվության ազատության հիմնահարցերը» թեմայով:

Աշխատանքային քննարկման հիմնական նպատակն էր իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների հետ քննարկել դատախազության աշխատանքների առանձնահատկությունները, դատախազության գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը, տրամադրվող տեղեկատվության հրապարակայնության սահմանները եւ այլն:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Յոսեփյանը՝ իր խոսքում հատուկ ընդգծելով դատախազական մարմինների աշխատանքների մասին հանրությանը ճշգրիտ եւ ստուգված տեղեկատվության տրամադրման անհրաժեշտությունը: «Դատախազությունը չի կարող դառնալ «սեւ արկղ» տեղեկատվության համար, այն տեղեկատվությունը, որը չի վնասում նախաքննությանը, մեր կողմից տրամադրվում է հանրությանը», - նկատեց ՀՀ գլխավոր դատախազը: Նաեւ Աղվան Յոսեփյանը թվարկեց դեպքեր, երբ հրապարակայնությունը վնասել է հանցագործության բացահայտմանը:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն եւ կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Արմեն Աշրաֆյանը խոսեց քրեական գործերով դատախազության հսկողության եւ դատավարական ղեկավարման առանձնահատկությունների մասին: ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական վարչության պետ Արտակ Յարությունյանն իր ելույթում անդրադարձավ դատախազության կառուցվածքի, լիազորությունների եւ դրանց իրականացման կառուցակարգերին: «Մենք հասանք մրան, որ եթե նախկինում դիմում էինք վճարեկ դատարան, մերժում էին՝ առանց պատճառաբանության, այժմ բոլոր մերժումները հստակ պատճառաբանված են»:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի պետ Նելլի Յարությունյանը հիմնականում խոսեց դատախազության դերի մասին՝ օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության, հանցագործների հանձման եւ տեղեկատվության փոխանակման գործում:

ԻԱԿ եւ Աժ փորձագետ Մարինե Յակոբյանը ներկայացրեց ՏԱ օրենքը, մերժման, վճարման կարգերը, տրամադրվող տեղեկատվության սահմանափակումները եւ այլն: «Դատական պրակտիկայում հրապարակայնությունը երկու ձևով է հանդես գալիս. գործում է անձին ուղղված հրապարակայնության սկզբունքը, որը ուղղակիորեն անձին ուղղված իրազեկման գործառույթն է եւ հանրության իրազեկում՝ ՁԼՄ-ի միջոցով»: Լրագրողներին հետաքրքրում էին անձնական կյանքի եւ ընտանեկան գաղտնիքի վերաբերյալ տեղեկատվության սահմանները, նախաքննական գաղտնիք համարվող տեղեկությունների իրավական բացատրությունը եւ այլն: Ներկաները փորձագետից հետաքրքրվեցին, թե արդյոք անձնական սեփականություն հանդիսացող տարածքներում (խանութներ եւ այլն) կարելի է նկարահանումներ անել: Մ. Յակոբյանը պատասխանեց, որ՝ այո, քանի որ նկարահանվում են այնտեղի ապրանքները, որոնք անձնական սեփականություն չեն:

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի ավագ գիտաշխատող Տիգրան Պողոսյանն էլ խոսեց խոսքի ազատության եւ զրպարտության, վիրավորանքի սահմանազատման չափորոշիչների մասին: Մանրամասն ներկայացրեց միջազգային փորձը, նշյալ հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների եւրոպական դատարանի կողմից կայացրած վճիռները եւ այլն:

## **SU դասընթաց ուսանողների համար**

Փետրվարի 28-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Երեւան քաղաքում ուսանողների հետ անցկացրեց ուսուցում՝ «Ինչպես կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը» թեմայով: Քննարկմանը մասնակցում էին 56 ուսանողներ:

Պարզվեց, որ ուսանողներից քչերն են ծանոթ SU օրենքին: ԻԱԿ եւ ԱԺ փորձագետ Մարինե Հակոբյանը ներկայացրեց SU օրենքը, պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, տեղեկատվություն ստանալու հարցում գրելու եւ մերժելու կարգերը, որն էլ բավականին մեծ հետաքրքրություն առաջացրեց ուսանողների մոտ: Մասնակիցները սկզբում թերահավատորեն էին վերաբերում այն բանին, որ իրենք կարող են տեղեկություն ստանալու հարցում ուղարկել, եւ ըստ օրենքի այն չպետք է անպատասխան մնա:

Մասնակիցներին հիմնականում հետաքրքրում էր ուսումնառության հետ կապված տեղեկությունների հրապարակայնությունը, աշխատանքի, զբաղվածության խնդիրը եւ այլն: ԻԱԿ փորձագետը մանրամասնեց, թե կրթության հետ կապված որ տեղեկություններն են հրապարակային եւ պարտադիր հրապարակման ենթակա:

Մ. Հակոբյանը կոչ արեց ուսանողներին լինել ավելի ակտիվ, տեր կանգնել իրենց իրավունքներին, տեղեկացված լինել, «քանի որ տեղյակ քաղաքացին ավելի ուժեղ է եւ հզոր»:

## **Օրենքը «մուտք գործեց» նաեւ քոլեջներ**

Մարտի 24-ին Երեւանում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը քոլեջների ղեկավարության եւ ուսանողության համար կազմակերպել էր աշխատանքային քննարկում՝ «Ինչպես կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը» թեմայով: Քննարկմանը մասնակցում էին 51 դասախոս եւ ուսանող:

ԻԱԿ եւ ԱԺ փորձագետ Մարինե Հակոբյանը մանրամասնեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, նաեւ ներկայացրեց տեղեկացրեց, որ «տեղեկատվություն ստանալու իրավունքը յուրաքանչյուրինն է՝ անկախ քաղաքացիությունից, տարիքից, ստատուսից եւ բնակության վայրից»:

Ուսանողներին բացատրվեց, թե իրենց կրթական հաստատության ղեկավարները ինչ տեղեկատվություն են պարտավոր հրապարակել, ուսանողներն ինչ տեղեկատվություն կարող են պահանջել եւ ստանալ եւ այլն: Մասնակիցներին հիմնականում հետաքրքրում էր ուսումնառության հետ կապված տեղեկությունների հրապարակայնությունը, աշխատանքի, զբաղվածության խնդիրը եւ այլն: «Չհրապարակված իրավական փաստաթուղթը իրավական ուժ չունի», - հիշեցրեց բանախոսը: Իսկ հրապարակայնության սկզբունքը ենթադրում է, որ տեղեկատվություն տնօրինողները պարտավոր են հրազեկել հանրությանը՝ անկախ նրանց հետաքրքրվածությունից: Հրապարակայնությունն ապահովվում է ՁԼՄ-ների, Ինտերնետի, ցուցատախտակների եւ այլ ձեւերով: Մատչելիության

սկզբունքը ենթադրում է փաստաթղթերի եւ գործունեության արդյունքների հասանելիություն, տեղեկատվության պարզ ձեւաչափի ընտրություն եւ տրամադրում՝ հաշվի առնելով բնակչության բոլոր խմբերի հնարավորությունները:

Ուսանողներից մեկը տեղեկացրեց, որ իրենց ուսումնական հաստատությունում հրապարակայնությունը մատչելիության հետ անհամատեղելի է, քանի որ «տնօրինության որոշումները փակցվում են ընդամենը 1-2 ժամով, կամ էլ ապակիների ետեւում են, իսկ ապակիները չափից շատ կեղտոտ են եւ ոչ տեսանելի»:

Մարինե Հակոբյանն էլ պատասխանեց, որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, «եթե որոշումը չի հրապարակվում, ապա այն ենթակա չէ իրագործման»:

Միջոցառումն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում:

ԻԱԿ-ը շարունակում է իրականացնել տեղեկատվություն ստանալու իրավունքի դատական պաշտպանությունը: 2008թ.-ի սեպտեմբեր ամսից մինչ 2009-ի ապրիլը տեղեկատվության իրավունքը խախտած 4 ՏԻՄ-երի դեմ կազմակերպությունն արդեն 4 դատական հայց է ներկայացրել, որոնց գործերի քննությունն արդեն ավարտվել է, եւ կայացվել են որոշումներ: ԻԱԿ-ին տրամադրվել են մերժված տեղեկությունները: Ստորեւ ներկայացնում ենք այդ գործերից վերջինը:

## ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Նոր Նորքի թաղապետի եւ թաղապետարանի

Մարտի 23-ին ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Աշոտ Սարգսյան) մասնակի բավարարեց ԻԱԿ-ի հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով: Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել ԻԱԿ-ի կողմից հայցվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված Նոր Նորքի ղեկավարի գործողությունները եւ Նոր Նորքի համայնքից հոգուտ ԻԱԿ-ի բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Հունվարի 26-ին ՀՀ վարչական դատարանում (դատավոր՝ Աշոտ Սարգսյան) կայացավ նախնական դատական նիստը՝ ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանի՝ թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին:

ԻԱԿ-ի ներկայացուցիչ փաստաբան Կարեն Մեծլումյանը պնդեց հայցապահանջը, իսկ պատասխանող կողմն էլ առարկեց. «Մենք չենք հրաժարվել տեղեկատվություն տրամադրելուց, պարզապես տվյալ պահին չենք ունեցել պահանջվող տեղեկատվությունը, հետեւաբար չենք հանդիսացել տեղեկատվություն տնօրինող, որի արդյունքում էլ ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու հարցմանը լիարժեք չենք պատասխանել»:

Դատավոր Ա. Սարգսյանն ամեն կերպ փորձում էր հաշտեցնել կողմերին, անգամ հուշում էր պատասխանող կողմին, թե ինչ միջնորդությամբ հանդես գա: Մասնավորապես, երբ դատարանը վկայակոչեց ԻԱԿ-ի գործն ընդդեմ Դավթաշենի թաղապետարանի գործը՝ առաջարկելով պատասխանող կողմին նմանատիպ պատասխան տալ ԻԱԿ-ին, Նոր Նորքի թաղապետարանի ներկայացուցիչ

Աղավնի Կարապետյանը պատրաստակամություն հայտնեց, որ իրենք եւս ԻԱԿ-ի հարցմանը պատշաճ ձեւով պատասխան կտան: Այդ պատասխանը դատավորը ձեւակերպեց իր բառերով եւ համարեց պատասխանող կողմի միջնորդություն: Արդյունքում, դատարանը «բարի կամք» դրսեւորեց եւ հետաձգեց դատական նիստը մինչեւ փետրվարի 6-ը՝ տեղեկություն ստանալու իրավունքը խախտած Նոր Նորքի թաղապետարանին եւ համայնքապետին հնարավորություն ընձեռելով հարցը արտադատարանական կարգով լուծել: Նաեւ կողմերին խորհուրդ տվեց «ամբիցիաներին տուրք չտալ», այլ ամեն զնով համաձայնության գալ: Հաջորդ նախնական դատական նիստը նշանակվեց փետրվարի 6-ին, ժամը 15:30-ին:

Ի դեպ, դատավորի «բարի կամքը», չգիտես ինչու, չդրսեւորվեց լրագրողների հանդեպ. դատավորը նիստին ներկա լրագրողներին թույլ չտվեց լուսանկարել դատական նիստը՝ սահմանափակելով դատական նիստի հրապարակայնության սկզբունքը: Այս մասին մամուլում տեղ գտած հրապարակումների արձագանքը եղավ այն, որ փետրվարի 6-ի դատական նիստը սկսվեց հատուկ լրագրողների համար կազմակերպված ֆոտոսեսիայով:

Նոր Նորքի թաղապետարանի ներկայացուցչին պատճառ կերպով ծանուցվել էր նիստի մասին, սակայն պատասխանող կողմը չէր ներկայացել: Դատը սկսվեց առանց պատասխանող կողմի: Եվ որքան էլ դատավորը դեռ նախորդ նախնական



դատական նիստի ժամանակ ջանք էր թափում հաշտեցնել կողմերին, այնուամենայնիվ, հաշտություն տեղի չէր ունեցել: Դատավորը գործը համարեց դատաքննությանը նախապատրաստված, գործի քննությունը նշանակեց 2009թ. մարտի 6-ին, ժամը 15:30-ին՝ չմոռանալով կրկին անգամ հույս հայտնել, որ մեկ ամսվա ընթացքում հնարավոր է հաշտություն կնքվի ԻԱԿ-ի եւ Նոր Նորքի թաղապետարանի միջեւ:

Մարտի 6-ին ՀՀ Վարչական դատարանում (նախագահող դատավոր՝ Աշոտ Սարգսյան) շարունակվեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ընդդեմ Նոր Նորքի թաղապետի եւ թաղապետարանի հայցի նախնական քննությունը:

Նոր Նորքի թաղապետարանը 2009թ. փետրվարին պատասխանել էր 01.08.2008թ.-ին ԻԱԿ-ի կողմից

ուղարկված տեղեկատվություն ստանալու հարցմանը: Չնայած դատավորն ամեն կերպ փորձում էր դատն ավարտել հաշտությամբ, սակայն ԻԱԿ ներկայացուցիչ Կարեն Մեծլունյանը չիրաժարվեց հայցից: Ընդհակառակը, պահանջեց, որ դատարանը ճանաչի խախտված իրավունքի փաստը:

Մարտի 23-ին ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Աշոտ Սարգսյան) **մասնակի բավարարեց** ԻԱԿ-ի հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով: Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել ԻԱԿ-ի կողմից հայցվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված Նոր Նորքի ղեկավարի գործողությունները եւ Նոր Նորքի համայնքից հոգուտ ԻԱԿ-ի բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Սակայն ՀՀ վարչական դատարանը մերժեց հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասով:

Այսպիսով, հերթական անգամ ԻԱԿ-ը դատական կարգով վերականգնեց տեղեկատվություն ստանալու խախտված իրավունքը: Հերթական անգամ դատարանը միջնորդ դարձավ, որ պետական մարմինը տեղեկատվություն տրամադրի: Սակայն մտահոգիչն այն է, որ դատարանը դեռեւս չի կիրառում ՏԻՄ ղեկավարներին վարչական պատասխանատվության ենթարկելու օրենսդրության պահանջը՝ տուգանքը: Այդ իսկ պատճառով ԻԱԿ-ը վճիռը բողոքարկելու է վճռաբեկության կարգով, որ ի վերջո տուգանքը՝ որպես պատճամիջոց, եւս կիրառվի:

«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագրում պարբերաբար ներկայացնում ենք նաև այլ անձանց կողմից իրականացված տեղեկատվություն ստանալու իրավունքի դատական պրակտիկան: Մասնավորապես իրավաբան Արտակ Ձեյնալյանը բավականին ակտիվ է այս գործում, ով ՏԱ խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ մի շարք հայցեր է ներկայացրել դատարան: Ստորև ներկայացնում ենք դրանցից երեքը:

## Ա. Ձեյնալյանն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության

2008թ. օգոստոսի 4-ին ՀՀ քաղաքացի Արտակ Ձեյնալյանը տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղղել ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանին՝ պահանջելով 2008թ. օգոստոսի 1-ին երեւան քաղաքի Մատենադարանին հարող տարածքում անցկացված զանգվածային հրապարակային միջոցառման եւ դրան հաջորդած երթի վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն ՀՀ ԿԱ ԱԱԾ-ից պատասխան չէր ստացել:

Արտակ Ձեյնալյանը ՀՀ վարչական դատարան հայց էր ներկայացրել ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին: Գործի քննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչն ընդունեց հայցը՝ տեղեկատվության ազատության իրա-

վունքի խախտման փաստը ճանաչելու պահանջի մասով՝ միեւնույն ժամանակ նշելով, որ տեղեկատվություն ստանալու հարցմանը հնարավոր չէր եղել անմիջապես պատասխանել, «քանի որ առաջադրված հարցադրումները լրացուցիչ ուսումնասիրման կարիք են ունեցել»: Համապատասխան աշխատանքները կատարելուց հետո՝ օգոստոսի 27-ին, Ա. Ձեյնալյանի հարցմանը պատասխան տրվել է:

ՀՀ վարչական դատարանը, ուսումնասիրելով գործում առկա բոլոր փաստերը, 2009թ. հունվարի 8-ին կայացած դատական նիստի ժամանակ **վճռեց բավարարել** Արտակ Ձեյնալյանի հայցն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության եւ ճանաչել Ա. Ձեյնալյանի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը, իսկ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության տեղեկատվություն տրամադրելու մասին հայցը կարճել:

## Ա. Ձեյնալյանն ընդդեմ ՀՀ արտաքին գործերի նախարարության

ՀՀ վարչական դատարանը 2009 թ.-ի հունվարի 8-ին կայացրած վճռով ճանաչել է քաղաքացու տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը, սակայն մերժել է տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջը:

2008թ. օգոստոսի 27-ին ՀՀ քաղաքացի Արտակ Ձեյնալյանը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել է ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանին՝ խնդրելով տալ տեղեկատվություն հետեւյալի մասին՝

1. Հայաստանի օրենսդրության համաձայն ես եւ/կամ վստահորդներս ներկայումս ունե՞նք արդյոք մեր գործերի վարույթների երկարատեւությունը բողոքարկելու մատչելի պաշտպանության միջոցներ.
2. Եթե այո, ապա «արդյունավետ» են դրանք՝ այն իմաստով, որ հնարավոր լինի կանխել ենթադրյալ խախտումը, կամ դրա շարունակումը, կամ

պատշաճորեն վերականգնել արդեն խախտված իրավունքը,

3. Եթե առկա են պաշտպանության միջոցներ, ինձ տրամադրել (կամ կոնկրետ մատնանշել, թե որտեղի՞ց կարող եմ դրանք գտնել) ներպետական իրավակիրառական պրակտիկայից օրինակներ՝ ցույց տալու համար, որ օգտագործելով խնդրո առարկա միջոցները՝ այլ անձանց համար հնարավոր եղել է հատուցում ստանալ եւ/կամ կանխել ենթադրյալ խախտումը եւ/կամ դրա շարունակումը:

Հարցմանը ԱԳՆ-ի կողմից որեւէ պատասխան չի տրվել: Ա. Ձեյնալյանը հայց է ներկայացրել ՀՀ

վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին:

Պատասխանող կողմը՝ ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչ Ա. Կարապետյանը, սակայն, դատաքննության ժամանակ անհիմն համարեց Ա. Ջեյնալյանի հայցադիմումը՝ հարցումը համարելով «անհասկանալի բովանդակության»: Պատասխանող կողմը տեղեկացրեց, որ իրենք ցանկացել են մանրամասնել հարցման բովանդակությունը, սակայն տեղեկատվություն ստանալու հարցման մեջ նշված չի եղել հեռախոսահամար, արդյունքում՝ հնարավոր չի եղել հստակեցնել պահանջվող տեղեկությունները: Այնուամենայնիվ, ՀՀ ԱԳՆ-ն Ա. Ջեյնալյանին տվել է պատասխան, որն ուղարկել է սեպտեմբերի 9-ին՝ խախտելով տեղեկատվության տրամադրման համար սահմանված 5-օրյա ժամկետը: Նաեւ ԱԳՆ ներկայացուցիչը դատավարության ընթացքում տեղեկացրեց, որ հայցվորը՝ Ա. Ջեյնալյանը, տեղեկություն ստանալու հարցումն ուղարկել է ՏԱ օրենքի խախտմամբ: Այսինքն՝ գրավոր հարցման մեջ չի նշել իր

քաղաքացիությունը, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը, ինչը բխում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

ՀՀ վարչական դատարանը (նախագահությամբ Արգիշտի Ղազարյանի) 2009 թ.-ի հունվարի 8-ին կայացած դատական նիստի վճռով որոշեց Արտակ Ջեյնալյանի հայցն ընդդեմ ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջի մասին, **բավարարել մասնակի**. ճանաչել Ա. Ջեյնալյանի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը՝ միեւնույն ժամանակ մերժելով ՀՀ ԱԳՆ-ին տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջը:

Վճիռը բավականին անհասկանալի է, քանի որ, եթե խախտված իրավունք կա, ապա հնարավորության սահմաններում պետք է այն վերականգնել, ինչը, սակայն, դատարանը չի արել: Այս եւ այլ հանգամանքները հաշվի առնելով՝ Ջեյնալյանը որոշել է ՀՀ վարչական դատարանի 08.01.09թ. կայացրած վճիռը բողոքարկել:

## Ա. Ջեյնալյանն ընդդեմ ՀՀ Ոստիկանության

ՀՀ քաղաքացի Արտակ Ջեյնալյանը տեղեկատվություն ստանալու հարցումով դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ պահանջելով.

1. Տեղեկատվություն տալ՝ 2008թ. օգոստոսի 1-ին Երեւան քաղաքի Մատենադարանին հարող տարածքում անցկացված զանգվածային հրապարակային միջոցառման եւ դրան հաջորդած երթի ընթացքում հրապարակային միջոցառման մասնակիցները հրահրե՞լ են արդյոք բախումներ ոստիկանության ծառայողների հետ եւ զանգվածային անկարգություններ:

2. Եթե այո, ապա՝ ինձ տրամադրել նաեւ այն իրավական ակտի պատճենը, որում արձանագրված է այդ փաստը:

Սակայն ՀՀ ոստիկանությունը հարցմանը որեւէ պատասխան չի տվել: 2008թ. սեպտեմբերի 1-ին Արտակ Ջեյնալյանը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ԿԱ ոստիկանության՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին:

Դատարանում պատասխանող կողմը ամբողջությամբ առարկեց հայցապահանջի դեմ՝ համարելով այն անհիմն, քանի որ Ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության պրոֆիլակտիկայի բաժնի պետի 27.09.2008թ. թիվ գրությամբ, ճիշտ է 19 օր ուշացմամբ, բայց պատասխան, այնուամենայնիվ, տրվել է: Դատաքննության ընթացքում դատարանը եկավ այն եզրահանգման, որ չնայած այն բանին, որ Ոստիկանությունը պատասխանել է Ա. Ջեյնալյանի հարցմանը, այդուհանդերձ դա արել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգօրյա ժամկետի խախտմամբ՝ դրանով իսկ խախտելով քաղաքացու ՏԱ եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը:

ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Արգիշտի Ղազարյան) 2009 թ.-ի հունվարի 8-ին հրապարակեց վճիռ, որով **բավարարեց Ա. Ջեյնալյանի** հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության: Դատարանը վճռեց ճանաչել Արտակ Ջեյնալյանի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:


# Ժողովրդավարի շղարշով թաղապետեր

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը վերաբերում է տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովմանը, ըստ որի, տեղեկություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ պետք է հրապարակի իր գործունեությանն առնչվող տեղեկություններն ու դրանցում կատարված փոփոխությունները:

## Գրիշա Բալասանյան

Հատկապես համայնքապետերը պարտադիր պետք է հրապարակեն հանրության համար իրականացվող աշխատանքները եւ ծառայությունները, համայնքի բյուջեն, հաստիքացուցակները, ինչպես նաեւ՝ պաշտոնատար անձանց անուն-ազգանունը, կրթությունը մասնագիտությունը, պաշտոնը, աշխատավայրի հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, հասարակական միջոցառումների ծրագրերը նաեւ համայնքի ղեկավարի ու ավագանու կայացրած որոշումները եւ այլն: Նշված տեղեկությունները հանրության սեփականությունը պետք է դարձնեն այլ գերատեսչություններ նույնպես, սակայն անդրադառնալով Երեւան քաղաքի մի քանի թաղային համայնքներում ու հատկապես թաղապետարանների վարչական շենքերում փակցված տեղեկատվական թերթիկներին: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ) աշխատակիցները սույն թվականի փետրվարի 11-18-ը այցելելով թաղապետարանների շենքեր, ականատես են եղել հետեւյալ իրողությանը:

Օրինակ, Կենտրոն թաղապետարանի հայտարարությունների ցուցանակին օրենքով պահանջվելիք եւ ոչ մի տեղեկատվություն հրապարակված չէր: Փակցված էր մի քանի պայմանագրերի օրինակներ, բնապահպանական ցուցահանդեսին վերաբերող աֆիշա, ինչպես նաեւ կրթության դերը՝ ժողովրդավարական, սոցիալական արդար ու սուղար պետականության զարգացման համար խորագիրը կրող ՄԻԺԻ-ի կազմակերպած քաղաքացիական կոնֆերանսների ժամանակացույցը: Պարզվում է Կենտրոնի թաղապետը սիրով անդրադառնում է այլ կազմակերպությունների ժողովրդավարական թեմաներով միջոցառումներին, սակայն այդչափ սիրով էլ անտեսում է, որ իր տնօրինության տակ գտնվող տեղեկատվությունը հրապարակելը նույնպես ժողովրդավարության տարրերից է:



Նույնպիսի «ժողովրդավարական» ժեստ է ցույց տվել նաեւ Էրեբունու թաղապետը՝ փակցնելով համայնքային ծառայության գլխավոր պաշտոններին վերաբերող հարցաշար, ՀՀ Սահմանադրությունից հոդվածներ ու տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող օրենսդրությունը: Այս համայնքում նույնիսկ ափսոսել են ցուցանակ կախել եւ պատի վրա փակցված 39 էջանոց այդ «ինֆորմացիայի» մեջ ԻԱԿ-ի աշխատակիցները չեն գտել եւ ոչ մի տող, որը վերաբերեր զուտ Էրեբունի համայնքին: Փոխարենը չեն գլացել եւ փոխթաղապետերի համար նախատեսված երրորդ հարկի լվացարանի հարեւանությամբ մեծ-մեծ տառերով գրել են՝ «լվացարանը մաքուր պահեք»:

Ավելի «հարուստ» էր Շենգավիթի թաղապետարանի ցուցանակը: Այստեղ հիշել են բոլորին՝ որբերից մինչեւ սոցիալական խնդիրներ ունեցող մարդկանց, ցուցանակում կար նաեւ հարկերի եւ տուրքերի մասին գրառումներ, պայմանագրերի օրինակներ եւ այլն: Մանրամասն ներկայացրել էին

[www.foi.am](http://www.foi.am)

այն ցանկը, թե երեխաներին մանկատուն ուղարկելու վերաբերյալ որոշում կայացնելու համար հարազատները ինչ փաստաթղթեր ներկայացնեն: Շենգավիթը նույնպես բացառություն չէր եւ այս թաղապետարանում էլ հարկ չեն համարել հաշվետու լինել իրենց ընտրողների առջեւ՝ չհրապարակելով թաղապետարանի շենքում կայացված եւ ոչ մի որոշում:

Դեռեւս դեկտեմբեր ամսվա վերջին, Արաբկիր համայնքի ավագանին հաստատել էր այս տարվա համայնքային բյուջեն, սակայն երկու ամիս անց էլ արաբկիրցին տեղյակ չէ, թե իր գրպանի հաշվին գոյացած բյուջեն ի՞նչ ուղղվածություն ունի, ինչպիսի՞ խնդիրներ են լուծվելու համայնքում եւ այդ գումարները որտե՞ղ են դատարկվելու:

Թաղապետարանի շենքի ցուցանակում հրապարակված տեղեկատվությունն, ըստ ԻՎԿ-ի, ավելի շատ վերաբերվել է թաղապետարանի աշխատակիցների աշխատանքային հարաբերություններին, քան համայնքի խնդիրներին: Օրինակ, ցուցանակում տեղադրված է եղել թաղապետարանի կառուցվածքի, աշխատանքային կանոնակարգի մասին գրություն, իսկ բնակիչների համար՝ էլցանցերի, գազամատակարարման, ջրամատակարարմանը վերաբերող հայտարարություններ, թաղապետարանում գործող թեժ գծի հեռախոսահամարը (28-44-13), ինչպե՞ն նաեւ թաղապետ Ալբերտ Երիցյանի այս կամ այն առիթով արված շնորհա-

վորանքը՝ ուղղված թաղապետարանի որեւէ աշխատակցին:

Չափից դուրս աղքատիկ է Դավթաշենի թաղապետարանի ցուցանակը, կարելի է ասել, այնտեղ ոչ մի օգտակար բան չի գտնվել, բացի «ծխելը խստիվ արգելվում է» եւ Կարմիր Խաչի «Օգնենք երեխաներին» հայտարարություններից:

Տեղական տուրքերին վերաբեվող ավագանու որոշումներ, գույքահարկի արտոնություններ, թաղապետարանին պատկանող մշակութային խմբակների եւ այլ հայտարարություններ է փակցված Քանաքեռ-Ձեյթուն թաղապետարանում: Այստեղ էլ բյուջեի մասին ոչ մի խոսք չկա:

Կարող ենք եզրակացնել, որ վերը նշված որեւէ թաղապետ իր լիազորությունները պատշաճ չէր կատարել եւ չէր փակցրել ավագանու եւ թաղապետի որոշումները, իհարկե որոշ չափով հրապարակային է եղել Քանաքեռ-Ձեյթուն թաղապետարանը, սակայն հիմնական փաստաթղթերը, որը պետք է քաղաքացիների համար հրապարակվեր, այդպես էլ չի արվել: Այս անմխիթար վիճակը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ որեւէ իրավասու պաշտոնյա, ասենք Դավթաշենի թաղապետին «չհասկացնի», որ «ծխելը արգելվում է» հայտարարությունը տեղեկատվություն հրապարակել չի նշանակում եւ ամենեւին էլ կապ չունի օրենքի պահանջի հետ:

# Մարզպետարանները սկսել են բաց եւ հրապարակային աշխատել

2009 թվականի փետրվար ամսին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու հարցումներ էր ուղարկել Հայաստանի 10 մարզի (Երեւանը չհաշված) ղեկավարներին, որով խնդրել էինք մարզպետերին ԻԱԿ-ին տրամադրել 2008թ. 4-րդ եռամսյակի ընթացքում իրենց կողմից կայացված որոշումների պատճենները: Ուրախությամբ նշենք, որ ոչ մի հարցում անպատասխան չի մնացել: Սակայն ժամկետների հետ կապված որոշակի թերացումներ դեռևս կան:

**Յ**արգմանը 5-օրյա ժամկետի սահմաններում պատասխանել են Տավուշի, Շիրակի, Կոտայքի եւ Արագածոտնի մարզպետարանները: Արարատի եւ Գեղարքունիքի մարզպետարանները պատասխանել են 9 օր անց, այսինքն՝ 4 օր ուշացումով: Սյունիքի եւ Լոռու մարզպետարանները՝ 11 օր անց՝ 6 օր ուշացումով: Լոռու մարզպետարանը պատասխանել է 12 օր ուշացումով, իսկ Արմավիրի մարզպետարանը՝ 20 օր:

Մարզպետարաններից ամենավատ ցուցանիշը Արմավիրի մարզպետարանինն է, որը, սակայն, սուբյեկտիվ պատճառների արդյունք է: Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փառանձեմ Կարապետյանը (ով պատասխանել էր հարցմանը) ուշացումը մեկնաբանեց հետևյալ կերպ. «Մարզպետը մակագրել էր ինձ վրա, ես էլ հիվանդացել էի, աշխատանքի չէի գալիս, որի հետևանքով էլ հարցման պատասխանը ուշացավ»:

Զնայած տեղեկատվություն ստանալու հարցումները միեւնույն բովանդակությունն ունեին, սակայն պատասխանները բազմաբովանդակ էին: Այսպես, ՀՀ 10 մարզից միայն 5-ի պատասխանին է կցված եղել մարզպետի որոշումների պատճենները՝ Գեղարքունիքի, Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի եւ Արագածոտնի: Ի դեպ, դրանք եղել են տարբեր քանակի. Գեղարքունիքի մարզպետի որոշումները կազմել են 103 էջ, Վայոց ձորինը՝ 20:

Հարցումներից 6-ի դեպքում հղում է արվել մարզպետարանի պաշտոնական վեբկայքին, որտեղ տեղադրված են մարզպետերի որոշումները: Միայն Սյունիքի մարզպետարանից եկած պատասխանն էր պարունակում եւ որոշումների պատճենները, եւ հղում՝ Սյունիքի մարզպետարանի ինտերնետային կայքին:

Պատասխանների մեջ միայն 2-ի դեպքում է հղում

արվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին: Կոտայքի մարզպետի պատասխանում ասվում է, որ «իրենք պատրաստակամ են ՏԱ օրենքի պահանջները կատարելու գործում», իսկ Շիրակի մարզպետարանի գրության մեջ հղում է արվել ՏԱ օրենքին՝ հիշեցնելով, որ օրենքի համաձայն տեղեկատվություն տրամադրելիս 10 էջից ավելին արդեն վճարովի է. «Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ ենթակետի, տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, իսկ ձեր պահանջը շուրջ 250 էջ է, այդ աշխատանքն առաջացնում է որոշակի նյութածախս: ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմը, լինելով պետական կառավարչական հիմնարկ, չի կարող իրականացնել վճարովի ծառայություններ, ուստի առաջարկում ենք ձեզ հարմար ժամանակահատվածում, ձեզ անհրաժեշտ որոշումների կրկնօրինակումը կազմակերպել Գյումրիում՝ մեր աշխատակիցների օգնությամբ, վճարովի ծառայություններ մատուցող որեւէ կազմակերպությունում»:

Ի դեպ, այս տարվա բյուջեում ՏԻՄ-երի համար հատուկ տողով գումար է հատկացված՝ տեղեկատվություն տրամադրելու նպատակով, սակայն օրենքի այդ կետից ոչ մի մարզպետարան եւ համայնք չի օգտվում:

**Հ. Գ. Պետք է արձանագրել, որ մարզպետարանների աշխատանքի հրապարակային եւ թափանցիկ լինելու գործում իր ներդրումն ունի նաեւ ԻԱԿ-ը, քանի որ մարզպետարանների եւ ՏԻՄ ներկայացուցիչների հետ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պարբերաբար ուսուցումներ է անցկացնում՝ «Ինչպես կիրառել ՏԱ օրենքը» թեմայով:**

## Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության նոր համակարգ մարզերում

Մինչ 2009թ.-ի տարեվերջ Չայաստանի 23 պետական կառավարման մարմին պետք է անցնի էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգին. այդ թվում 10 մարզպետարան եւ 13 նախարարություն: Այս առաջարկը ներկայացրել է կառավարության աշխատակազմը 2008թ.-ի վերջին:

Մինչ այժմ էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգն ամբողջությամբ գործում է Չայաստանի 5 պետական մարմիններում՝ ՀՀ կառավարության աշխատակազմում, Էկոնոմիկայի Ֆինանսների, Տարածքային կառավարման եւ Սփյուռքի նախարարություններում:

«Mulberry»-ին համակարգչային ծրագիր է, որի հիմնական խնդիրներն են պետական մարմիններում փաստաթղթերի հոսքի արդյունավետ կառավարում, փաստաթղթերի եւ կից նյութերի էլեկտրոնային տարբերակների կենտրոնացված պահպանում, փաստաթղթաշրջանառության պատմության գրանցում ու վերահսկում փաստաթղթի շարժի բոլոր փուլերում, կատարողական վերահսկողության ապահովում, անհրաժեշտ փաստաթղթերի արագ որոնում, փաստաթղթերի հետ աշխատանքի միասնական ձեւի ապահովում, մի քանի ստորաբաժանումների միաժամանակյա աշխատանքի ապահովում եւ փաստաթղթերի կորստի բացառում:

2005թ.-ին էլեկտրոնային կառավարման այս համակարգն ի սկզբանե ստեղծվել է Արտաքին գործերի նախարարության պատվերով: Սակայն այժմ նախարարությունում այն մասամբ է գործում: Պատճառները, ծրագրի ստեղծող "AI Partnership" ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Վահագն Մխիթարյանի կարծիքով, ադմինիստրատիվ բնույթի են. «Չեն կարծում, որ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմն ինչ որ բանով զիջում է մյուս նախարարություններին, որտեղ ներդրվել է համակարգը: Խնդիրն այստեղ ղեկավարության մեջ է: Որպեսզի «Mulberry» համակարգը գործի, անհրաժեշտ է նախարարի կամ համապատասխան այլ մարմնի հստակ կարգադրություն, որ այլեւս ոչ մի դիմում, հարցում, կամ պատասխան թղթի ձեւով չընդունվի: Միայն նման պահանջի հստակ առկայության դեպքում համակարգը կարող է գործել»:

«Mulberry»-ի օգտագործման եւս մեկ փորձ կատարվեց 2008թ.-ի առաջին կեսին ՀՀ կառավարության աշխատակազմում: Համակարգի ներդրողներից Վահագն Մխիթարյանի խոսքերով գործընթացը բավականին դժվար էր, քանի որ պետական այս մարմինն առաջինն էր, որ հստակ որոշել էր ամբողջությամբ անցնել էլեկտրոնային կառավարման այս համակարգին: «Ամուր կամքի շնորհիվ ամեն ինչ ի վերջո հաջողվեց», - ավելացնում է Վահագն Մխիթարյանը:

Հաջողված փորձից հետո «Mulberry»-ին արդեն սկսեց շահագործվել հաջորդաբար Ֆինանսների, Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման եւ Սփյուռքի նախարարություններում: Նշված նախարարությունները, Վահագն Մխիթարյանի խոսքերով, պատահական չեն ընտրվել: «Միայն ցանկությունն ու բարի կամքը բավական չէր: Անհրաժեշտ էր հաշվի առնել նաեւ պատական կառավարման մարմինների տեխնիկական հնարավորությունները: Ուստի նախապես ուսումնասիրություն անցկացվեց բոլոր նախարարություններում եւ մարզպետարաններում»:

Մարզպետարաններից առաջինը Կոտայքինն է, որտեղ այժմ փորձ է արվում ներդնել այս համակարգը: Այս մարզի ընտրությունն էլ պայմանավորված է անխափան Ինտերնետ կապով, որը համակարգի ամբողջական աշխատանքի համար կարելու էր ունի: ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ինֆոտեխնոլոգիաների բաժնի պետ Սերժ Հարությունյանի խոսքերով՝ 2009թ.-ի մարտի 15-ից Կոտայքի մարզում եւս կաշխատեն էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգով: Ներկայումս մարզպետարանի աշխատակազմի ուսուցման գործընթաց է: «Այս փորձը ցույց է տալիս, որ մեկ մարզպետարանում ծրագրի ներդրման համար պահանջվում է մոտ 15 օր: Եթե ֆինանսական եւ տեխնիկական հնարավորությունները, ինչպես նաեւ, համապատասխան քանակի ուսուցանողներ

րի առկայությունը ներեն, բոլոր պետական մարմիններում հնարավոր կլինի միաժամանակ կատարել համակարգի ներդրման եւ շահագործման գործընթաց», - հավաստիացնում է Սերժ Զարությունյանը: Եղեգնաձորում եւս փորձ է արվել անցնել այս համակարգին, բայց կապի համապատասխան որակի բացակայության պայմաններում հնարավոր չի եղել:

Համակարգը ներդրողների խոսքերով, ծրագրի ամենամեծ առավելությունն այն է, որ վերահսկելի է դառնում աշխատակազմի գործունեությունը: Պետական մարմնի համապատասխան ներկայացուցիչները քաղաքացու դիմում հարցումը՝ ներկայացված բոլոր փաստաթղթերի հետ միասին, էլեկտրոնային տարբերակով մտցնում են համակարգիչ: Հենց որ դիմումը մտցվում է համակարգիչ, քաղաքացին ստանում է գրավոր ծանուցում այն մասին, թե կոնկրետ երբ կարող է ստանալ դրա պատասխանը: Մյուս կողմից, հենց որ քաղաքացին լրացնում է իր դիմումը, պետական պաշտոնյան, ում ուղղված է հարցումը, իր համակարգչի վրա ստանում է ծանուցում դիմումի եւ դրա պատասխանի վերջնաժամկետի վերաբերյալ: Հենց այս գործընթացը վերահսկելու նպատակով էլ պետական կառույցներում, որտեղ շահագործվում է «Mulberry» համակարգը, գործում են վերահսկողության մարմիններ: Վերահսկող մարմինն ամենօրյա արդյունքների հիման վրա կարող է տեսնել, թե որ պաշտոնյաներն են ժամանակին եւ

ամբողջությամբ պատասխանում քաղաքացիների հարցումներին, ովքեր՝ ո՛չ: Այս ծրագիրը նաեւ կրճատում է պատասխանի ժամանակահատվածը: Բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են պաշտոնյային պատասխանի համար, արդեն իսկ գտնվում են համակարգի էլեկտրոնային բազայում եւ դրա գտնելն ու տրամադրելը պարզապես վայրկյանների հարց է:

Համակարգի առավելություններից մեկն էլ դրա ճկունությունն է: Սերժ Զարությունյանը, ով եւս այս համակարգի շահագործողներից է, նշում է, որ «Mulberry»-ին պարզապես գործիք է, կառկաս, որը հեշտությամբ հնարավոր է հարմարեցնել օգտագործող մարմնի պահանջներին: «Օրինակ՝ յուրաքանչյուր շահագործող մարմին կարող է ստեղծել իրեն անհրաժեշտ փաստաթղթերի տեսակները եւ գծել դրա շարժի ճանապարհը», - պարզաբանում է պարոն Զարությունյանը:

Նշենք, որ մինչ ապրիլի 15-ը էլեկտրոնային կառավարման այս համակարգը կներդրվի նաեւ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունում: Սա, բացի ներքին փաստաթղթաշրջանառությունը էլեկտրոնային դարձնելուց նաեւ հնարավորություն կստեղծի, որ քաղաքացին գույքի եւ եկամուտների հայտարարագիր լրացնի էլեկտրոնային ճանապարհով: Հարկային պետական ծառայությունում համակարգի ներդրումը հնարավոր է դարձել Եվրամիության ֆինանսավորմամբ:

## Տարածքային կառավարում Էլեկտրոնային միջավայրում

ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը մեկն է այն 5 պետական կառավարման մարմիններից, որտեղ ներկայումս գործում է էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգը: Ծրագրի կիրառման նպատակների, դրա ընձեռած հնարավորությունների, շահագործման դժվարությունների եւ այլ հարցերի շուրջ զրուցել ենք նախարարության Ինֆոտեխնոլոգիաների, տվյալների բազաների եւ կապի վարչության պետ Սուրեն Կոչեցյանի հետ:

**ԻԱԿ- Որքա՞ն ժամանակ է, որ Տարածքային կառավարման նախարարությունում գործում է փաստաթղթաշրջանառության «Mulberry» էլեկտրոնային համակարգը:**

**Ս.Կ.-** Համակարգը նախարարությունում ամբողջությամբ գործում է 2008թ.-ի օգոստոսի 19-ից: Մինչ այդ 2007թ.-ի հուլիսի 1-ից այն փորձնական շահագործում էր անցնում: Այդ ընթացքում աշխատել է նաեւ հին համակարգը, եւ թուղթը չի բացառվել: Բայց օգոստոսի 19-ից հետո նախարարության ներսում բոլոր աշխատանքները կատարվում են բացառապես էլեկտրոնային ձևով:

**ԻԱԿ- Մինչ «Mulberry» ծրագիրը նախարարությունում էլեկտրոնային կառավարման այլ համակարգ գործե՞լ է:**

**Ս.Կ. -** Նախկինում նախարարությունում գործում էր կառավարման էլեկտրոնային այլ համակարգ. համակարգիչ տեղադրված էր միայն ընդհանուր բաժնում, որն էլ որ ֆիքսում էր փաստաթղթերի մուտքն ու ելքը: Դեռ առկա էր թղթի գործոնը. թուղթը գրանցում էին, տանում համապատասխան հասցեատիրոջը, ստանում նրա ստորագրությունը, ետ բերում, ֆիքսում համակարգում եւ այլն: Երբեմն այդ ընթացքը շատ ավելի ծավալուն գործողություններ էր պահանջում, ինչն էլ իր հերթին բավականին շատ ժամանակ էր խլում: Իսկ «Mulberry»-ին ընդարձակեց գործունեության միջավայրը՝ ստեղծելով նախարարության համակարգիչների ցանց, որի միջոցով էլ հիմա այդ ամբողջ շարժը կատարվում է էլեկտրոնային ձևով: Այժմ մեր բոլոր աշխատակիցները համակարգի օգտվողներ են, ունեն իրենց էլեկտրոնային հասցեները: Երբ թուղթը մտնում է նախարարություն, ֆիքսվում է ընդհանուր բաժնում, եւ ներսում մնացած ամբողջ շարժը կատարվում է համակարգի

միջոցով: Սովորաբար ելքը նույնպես թղթային տարբերակով է կատարվում: Բացառությամբ այն դեպքերի, երբ այն տեղի է ունենում էլեկտրոնային ձևով: Մասնավորապես կապն այն մարմինների հետ, որտեղ արդեն ներդրված է «Mulberry»-ի համակարգը, օրինակ՝ Կառավարության, Ֆինանսների, Էկոնոմիկայի եւ Սփյուռքի նախարարությունների հետ: Չնայած՝ սովորույթի ուժով դեռեւս ուղարկում ենք նաեւ թղթային տարբերակը: Սակայն, մեր օրինակից ելեկտրոնային կարող են ասել, որ սրա անհրաժեշտությունն արդեն իսկ չկա:

**ԻԱԿ- Արդյոք այս համակարգը հնարավորություն տալի՞ս է քաղաքացիների հետ կապը եւս իրականացնել էլեկտրոնային ճանապարհով:**

**Ս.Կ. -** Քաղաքացիների հետ շփումը եւս հնարավոր է իրականացնել էլեկտրոնային ձևով՝ օգտագործելով նախարարության ինտերնետային կայքը: Օրինակ, քաղաքացին մեզ ինտերնետի միջոցով ուղարկում է իր հարցումը եւ մենք այն միացնում ենք «Mulberry»-ին: Նման դեպքեր դեռեւս չկան, քանի որ քաղաքացիների հետ անմիջական շփում մեր նախարարությունը գրեթե չունի: Դա հիմնականում Երեւանի քաղաքապետարանի եւ տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրն է: Քաղաքացիների հետ մեր անմիջական շփումը կատարվում է ավանդական փոստի միջոցով: Նամակը ֆիքսվում է ընդհանուր բաժնում, ստանում ենք դրա էլեկտրոնային տարբերակը եւ հետո ընթացքը կատարվում է էլեկտրոնային ձևով: Այդ նամակը թղթի տեսքով տեսնում է միայն ընդհանուր բաժնի աշխատակիցը:

Քաղաքացին կարող է նամակ գրել նաեւ նախարարության էլեկտրոնային փոստի հասցեով ([mta@mta.gov.am](mailto:mta@mta.gov.am)), որին մուտք ունեն նախարարության բոլոր աշխատակիցները: Հարցում նա-

խարարություն կարելի է ուղարկել նաև Ինտերնետային կայքի «Դիմեք մեզ» բաժնից: Այս ճանապարհներով եկած դիմումները մենք նորից կարող ենք մուտքագրել «Mulberry» համակարգ, այստեղ ընթացք տալ եւ պատասխանն ուղարկել նորից էլեկտրոնային ճանապարհով:

**ԻԱԿ- Կարո՞ղ ենք ասել, որ, փաստորեն, համակարգի հիմնական նպատակը նախարարության ներսում թղթատարության կրճատումն է:**

**Ս.Կ.-** Ոչ թե կրճատումը, այլ՝ բացառումն է: Բացի ընդհանուր բաժնից, մյուս աշխատակիցները թուղթ ընդհանրապես չեն տեսնում: Համակարգը նաև էլեկտրոնային կապ է ապահովում «Mulberry»-ով աշխատող մյուս մարմինների հետ: Նրանց հարցումների պատասխանն ուղարկում ենք էլեկտրոնային տարբերակով: Չնայած այժմ դեռ զուգահեռ գնում է նաև թուղթը, բայց այդ պետական մարմիններում թղթին չեն էլ նայում, քանի որ այդ նույն փաստաթուղթն իրենք պատրաստի ստանում են էլեկտրոնային ձևով:

**ԻԱԿ- Համակարգի ներդրման ժամանակ ի՞նչ խնդիրներ են առաջանում:**

**Ս.Կ.-** Խնդիրները հիմնականում կապված են աշխատակիցների պատրաստվածության, տեխնիկական ապահովվածության եւ համակարգի անխափան աշխատանքի հետ: Տեխնիկական ապահովվածության առումով մեր նախարարությունում ամեն ինչ նորմալ էր, բավարարվեցինք մեր ռեսուրսներով: Բայց մարզպետարաններում հավելյալ տեխնիկա է պահանջվում համակարգի ներդրման համար: Անհրաժեշտ են արագագործ սկաներներ:

**ԻԱԿ- Իսկ որո՞նք են համակարգի առավելությունները:**

**Ս.Կ.-** Համակարգի առավելություններից մեկն այն է, որ աշխատանքի կատարման ժամանակ կրճատվում է կախումը մեկ այլ մարմնից: Օրինակ՝ նախկինում, երբ թղթով էինք աշխատում, հատուկ ժա-


մանակ էր հատկացված փոստ նայելուն: Մենք ստիպված էինք սպասել, թե երբ փոստի համար պատասխանատու անձը կբերի մեր նամակները, որից հետո միայն կարող էինք պլանավորել եւ կատարել աշխատանքը: Իսկ այս համակարգը հնարավորություն է տալիս ցանկացած ժամանակ ստուգել փոստը եւ առանց որեւէ մեկից կախում ունենալու անմիջապես կատարել ամբողջ աշխատանքը: Եթե օրվա վերջում նամականին մաքուր է, դա արդեն չափանիշ է, որ այդ պահին տվյալ աշխատակիցն իր բոլոր գործերն արդեն արել է:

Ամենամեծ առավելությունը, սակայն, մարզպետարանների հետ աշխատելիս ժամանակի կրճատումն է: Հայաստանի մարզերն իրարից բավականին հեռու են: Օրինակ՝ լինում են դեպքեր, երբ մի հրատապ խնդիր ունենք, որը տվյալ մարզը պետք է լուծի եւ պատասխանի եռօրյա ժամկետում, սակայն հեռավորության եւ փոստի աշխատանքից կախման պատճառով պատասխանող նամակը նախարարություն է հասնում միայն 15 օր հետո: Եթե մարզերի հետ կապն էլ այս համակարգի միջոցով կատարվի, աշխատանքները շատ ավելի արագ եւ որակով կկատարվեն:

**ԻԱԿ- Իսկ ե՞րբ է նախատեսվում, որ մարզպետարաններ եւ կաշխատեն այս համակարգով:**

**Ս.Կ.-** Կառավարության առաջարկի հիման վրա մինչ այս տարվա վերջ բոլոր մարզերում նախատեսվում է ներդնել էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգը: Նախատեսվում է, որ բոլոր նախարարություններն էլ անցնեն այդ համակարգին: Հետագայում, երբ «Mulberry»-ին հաջողությամբ գործի Կառավարությունում, նախարարություններում եւ մարզպետարաններում, հնարավոր է, որ տեղական ինքնակառավարման մարմինները եւս անցնեն այս համակարգին եւ լինի կառավարման մեկ ընդհանուր ձեւ ու միջավայր: Եվ այդ ժամանակ արդեն Կառավարությունից մինչեւ ամենախուլ գյուղն աշխատանքները կկատարվեն էլեկտրոնային ձևով եւ վայրկյանների ընթացքում, եթե իհարկե կապը նորմալ աշխատի:

# ՀՀ դատական համակարգի պաշտոնական կայքը www.court.am



**ՀՀ** դատական համակարգի պաշտոնական կայքի (court.am) բացումը տեղի է ունեցել 2007թ. հունիսի 18-ին: Կայքի ստեղծման աշխատանքներին աջակցել են Միացյալ Ազգերի Կազմակերպության Ջարգացման Ծրագրի Հայաստանյան Գրասենյակը (UNDP) եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Ջարգացման Գործակալությունը (USAID)՝ ի դեմս American Bar Association-ի եւ Bearing Point-ի:

